

Թոքերու Պատուաստանիւթ

Ի՞նչ Պէտք է Գիտնաք

Many Vaccine Information Statements are available in Spanish and other languages. See www.immunize.org/v13.
Պատուաստի վերաբերեալ շատ յայտարարութիւններ կը գտնուին սպաներէնով եւ այլ լեզուներով: Տե՛ս՝ <http://www.immunize.org/v13>

Ձեր բժիշկը խորհուրդ կու տայ, որ ձեր երեխան այսօր ստանայ PCV13 պատուաստանիւթի դեղաչափ:

1 Ինչո՞ւ պատուաստ ստանալ:

Թոքերու պատուաստանիւթը (որ կը կոչուի PCV 13 կամ Prevnar 13)¹ թոքատապային հիւանդութենէ պաշտպանելու համար, խորհուրդ կը տրուի մանուկներուն եւ նոր քայլ սորվող երեխաներուն, ինչպէս նաեւ որոշ այլ երեխաներուն ու մեծահասակներուն, որոնք որոշակի առողջական խնդիրներ ունին:

Թոքատապային հիւանդութիւնը կը յառաջանայ թոքային մանրէներէն վարակուելէ: Այս մանրէները կրնան անձէ անձ փոխանցուիլ՝ մօտ յարաբերութեան միջոցով:

Թոքատապային հիւանդութիւնը կրնայ լուրջ առողջական խնդիրներ յառաջացնել, ներառեալ թոքերու բորբոքում, արեան վարակներ եւ խելապատապ:

Խելապատապը ուղեղի ծածկոյթի բորբոքումն է: Թոքային խելապատապը բաւականին հազուադէպ կը հանդիպի (հարաքանջիւր տարի 100.000 մարդէն 1-էն պակաս պարագայի), բայց ան կը յառաջացնէ այլ առողջական խնդիրներ, ներառեալ խլութիւն եւ ուղեղի փաստածք: Երեխաներու մօտ, ան մահացու է 10-էն 1 պարագայի:

Երկու տարեկանէն փոքր երեխաները լուրջ հիւանդութեան աւելի մեծ վտանգի տակ են, քան աւելի մեծ երեխաները:

Որոշակի բժշկական խնդիրներ ունեցող մարդիկ, 65-էն բարձր տարիք ունեցող եւ ծխախոտ գործածողները եւս աւելի բարձր վտանգի տակ են:

Նախքան պատուաստանիւթը, թոքային բորբոքումի վարակները ամէն տարի շատ խնդիրներ կը յառաջացնէին Միացեալ Նահանգներու մէջ 5 տարեկանէն փոքր երեխաներուն մօտ, որոնք կը պարունակէին.

- Աւելի քան 700 խելապատապի դէպք
- Արեան վարակի 13.
- Ականջի վարակներու մօտ 5 միլիոն դէպք եւ
- Մահուան մօտ 200 դէպք

Ամէն տարի մօտ 4000 չափահաս կը մահանայ թոքատապային վարակներէ:

PCV13 Vaccine - Armenian 2/27/2013

Թոքատապային վարակները կրնան դժուար բուժուիլ, որովհետեւ որոշ տեսակներ կը դիմադրեն մանրէապանները: Ասիկա պատուաստանիւթի միջոցով կանխարգիլէ, նոյնիսկ աւելի կարեւոր կը դարձնէ:

2 PCV13 Պատուաստանիւթ

Գոյութիւն ունի աւելի քան 90 տեսակ թոքատապային մանրէներ: PCV 13-ը կը պայքարի անոնց 13-ին դէմ: Այս 13 տեսակները ամենածանր վարակները անոնց կէսն ալ չափահասներու մօտ:

PCV 13-ը սովորաբար կը տրուի 2, 4, 6 եւ 12-15 ամսական երեխաներուն: Այս տարիքի երեխաները կը գտնուին թոքատապային վարակի պատճառով լուրջ հիւանդութիւններ ձեռք բերելու վտանգին տակ:

PCV 13 պատուաստանիւթը նոյնպէս կարելի է տրուիլ որոշ աւելի մեծ տարիքով երեխաներու եւ չափահասներու համար:

Թոքատապային պատուաստանիւթի երկրորդ տեսակը, որ կը կոչուի PPSV23, նոյնպէս կարելի է տրուիլ երեխաներուն եւ չափահասներուն, ներառեալ 65 տարին լրացած ռեւէ անձի: Այս պատուաստանիւթին համար կայ առանձին «Պատուաստանիւթերուն վերաբերող տեղեկութիւններու յայտարարութիւն»:

3 Նախազգուշական միջոցներ

Ռեւէ մէկը որ երբեւէ կեանքին վտանգ սպառնացող ալերժիք հակազդեցութիւն ունեցած է այս պատուաստանիւթին, աւելի կանուխ առած PCV7 (կամ Prevnar) կոչուող թոքատապային պատուաստանիւթին, կամ որեւէ պատուաստանիւթին հանդէպ, որ կը պարունակէ կեղծմաշկի թաքսոյթ (օրինակ, DTaP), պէտք չէ PCV 13 ստանայ:

Ռեւէ մէկը որ ծանր ալերժիք հակազդեցութիւն ունեցած է PCV 13-ի որեւէ բաղադրիչի հանդէպ, պէտք չէ ստանայ պատուաստանիւթը: Ձեր բժիշկին տեղեկ պահեցէք, եթէ պատուաստանիւթ ստացող անձը որեւէ տեսակի ծանր ալերժիք հակազդեցութիւն ունի:



Եթե պատուաստանիթ ստանալու համար որոշում անձը հիւանդ է, հնարաւոր է, որ ձեր բժիշկը որոշէ ուրիշ օր մը վերածրագրելու ներարկումը:

Ձեր բժիշկը կրնայ ձեզի յաւելեալ տեղեկութիւններ տրամադրել որեւէ նախագգուշական միջոցներու մասին:

4 Վտանգներ

Որեւէ դեղի հետ, ներառեալ պատուաստանիթերը, կողմնակի ազդեցութիւններու վտանգ կայ: Անոնք սովորաբար մեղմ կըլլան եւ իրենք իրենց կանցնին, բայց հնարաւոր են նաեւ լուրջ հակազդեցութիւններ:

PCV 13-ի հետ կապուած եւ տեղեկագրուած խնդիրները կը տարբերին ըստ դեղաչափի եւ տարիքի, բայց ընդհանուր առմամբ.

- Պատուաստանիթ ստացած երեխաներուն մօտաւորապէս կէսը քնկոտ կը դառնան, ախորժակի ժամանակաւոր կորուստ կունենան, կամ ալ ներարկումի տեղը կարմրութիւն կամ փափկութիւն կունենան:
- Սօտաւորապէս 3-էն 1-ը ներարկումի տեղը ուռեցք կունենայ:
- Սօտաւորապէս 3-էն 1-ը թեթեւ տենդ կունենայ եւ Սօտաւորապէս 20-էն 1-ը բարձր տաքութիւն կունենայ (102.2°F-էն բարձր)
- 10-էն մինչեւ 8-ը անհանգիստ կամ դիրազրգիտ կը դառնան:

Չափահասները, որոնք ստացած են պատուաստանիթը, տեղեկագրուած ասեղին տեղը կը յայտնուին կարմրութիւն, ցաւ եւ ուռեցք: Տեղեկագրուած է նաեւ թեթեւ տենդ, զերյոզնածութիւն, գլխացաւ, հարբուխ կամ մկանային ցաւի մասին:

Պատուաստանիթերէն յառաջացող եւ կեանքին վտանգ սպառնացող հակազդեցութիւնները շատ հազուադէպ կը հանդիպին:

5 Ի՞նչ տեղի կունենայ, եթէ առկայ է լուրջ հակազդեցութիւն:

Ես ի՞նչ պէտք է փնտռեմ:

- Փնտռեցէք որեւէ բան, որ ձեզ կանհանգստացնէ, ինչպէս օրինակ, ծանր ալերժիք հակազդեցութեան նշաններ, շատ բարձր տաքութիւն կամ վարքի փոփոխութիւններ:

Ծանր ալերժիք հակազդեցութիւններու նշանները կրնան ներառել ջրածաղիկ, դէմքի եւ կոկորդի ուռեցք, շնչելու դժուարութիւն, սրտի արագ բարբախում, գլխապտոյտի զգացողութիւն եւ տկարութիւն: Ասոնք կրնան սկսիլ պատուաստանիթը ստանալէ վայրկեաններ

DCH-0955A

կամ ժամեր ետք:

Ես ի՞նչ պէտք է ընեմ:

- Եթէ դուք կը կարծէք, որ ասիկա ծանր ալերժիք հակազդեցութիւն կամ այլ շտապ բուժօգնութիւն պահանջող իրավիճակ է, անձը փոխադրեցէք ամենէն մօտ հիւանդանոցը կամ հեռաձայնեցէք 9-1-1: Այլապէս, կանչեցէք ձեր բժիշկը:
- Ետքէն, հակազդեցութիւնը պէտք է տեղեկագրուի «Պատուաստանիթի Բացասական Դեպքերու Հաշուետուական Համակարգ»ի մասին (VAERS): Ձեր բժիշկը կրնայ ներկայացնել այս տեղեկագրութիւնը, կամ դուք ձեզի կրնաք զայն ընել VAERS-ի կայքէջի միջոցով www.vaers.hhs.gov, կամ հեռաձայնելով 1-800-822-7967 հեռաձայնի թիւով:

VAERS-ը միայն հակազդեցութիւններու մասին տեղեկագրելու խորհուրդ չէն տար:

6 Պատուաստանիթէն Ստացած Վնասուածքի Հատուցման Ազգային Ծրագիր

Պատուաստանիթէն Ստացած Վնասուածքի Հատուցման Ազգային Ծրագիրը (VICP) ստեղծուեցաւ 1986-ին:

Այն անձերը, որոնք վստահ են, որ իրենք փաստուած են պատուաստանիթին պատճառով, կրնան տեղեկանալ ծրագրին մասին եւ պահանջք ներկայացնել հեռաձայնելով 1-800-338-2382 հեռաձայնի թիւով կամ այցելելով VICP-ի կայքէջը www.hrsa.gov/vaccinecompensation հասցեով:

7 Ինչպէ՞ս կրնամ յաւելեալ տեղեկութիւններ ստանալ:

- Հարցուցէ՛ք ձեր բժիշկին:
- Հեռաձայնեցէ՛ք ձեր տեղական կամ նահանգային առողջապահական կեդրոն: 1-888-767-4687
- Կապ հաստատեցէ՛ք Հիւանդութեան Կառավարման եւ Կանխարգիլման Կեդրոններու հետ (CDC)՝
 - Հեռաձայնելով 1-800-232-4636 (1-800-CDC-INFO) հեռաձայնի թիւով կամ
 - Այցելելով CDC-ի կայքէջը՝ www.cdc.gov/vaccines հասցեով

Vaccine Information Statement (Interim)

PCV13 Vaccine
Armenian

2 / 27 / 2013

42 U.S.C. § 300aa-26

Translation provided by the California Department of Public Health

AUTH: P.H.S., Act 42, Sect. 2126.



Բժշկական խնամք ապահովող(ներ)ին թույլատրելու համար պատվաստումների իրավիճակի վերաբերող հարցեր տեղեկություն, պատվաստումների գնահատականներ եւ հետագա պատվաստումների առաջարկված գրաֆիկը, տեղեկությունները կուղարկվեն Michigan Care Improvement Registry (Միչիգանի խնամքի բարելավման գրանցման կենտրոն): Անհատներն իրավունք ունեն արհեստցելու իրենց բժշկական խնամք ապահովողից, որպեսզի պատվաստումների տեղեկությունները գրանցման կենտրոն չուղարկվեն: